
Акрам Айлисли, Каменные сны. Роман-реквием. С азербайджанского. Перевод автора под редакцией М. Гусейнзаде // «Дружба народов», М., 2012, N 12, с. 13-69.

Աքրամ Այլիսլի, Քարե երազներ: Վեպ-ռեքվիեմ: Աղբբեջաներենից թարգմանությունը հեղինակի՝ Ս. Հուսեյնզադեի խմբագրությամբ, «Դրուժբա նարողով», Մոսկվա, 2012, թիվ 12, էջ 13-69:

Աղբբեջանցի անվանի գրող Աքրամ Այլիսլիի «Քարե երազներ» վեպը կարճ ժամանակում լայն և միաժամանակ տրամագծորեն հակընդդեմ արձագանքների արժանացավ հատկապես Հայաստանում և Աղբբեջանում¹: Կասկածից վեր է, որ դրա պատճառը հայկական խնդիրների արժարծումն է. հեղինակը նկարագրում է 1980-ական թվականների վերջին Աղբբեջանում տեղի ունեցած հայկական ջարդերը և հասարակական-քաղաքական կյանքում ծավալված հակահայկական հիստերիան: Ինչ խոսք, Աղբբեջանում տիրող ամբողջատիրական վարչակարգի, ավելի ստույգ՝ բռնապետության և ազգայնամոլության պայմաններում սույն վեպի հրատարակումը խիստ համարձակ և խիզախ քայլ էր:

Ա. Այլիսլին դեռևս Խորհրդային Աղբբեջանում լայն ճանաչման արժանացած ամենահայտնի գրողներից է: Նա աղբբեջանցի գրողների ավագ սերնդի ներկայացուցիչն է, ծնվել է 1937 թ., Աղբբեջանի անկախության տարիներին արժանացել բազմաթիվ բարձրագույն պարգևների, շքանշանների և կոչումների, այդ թվում՝ Աղբբեջանի ժողովրդական գրողի, մշակույթի վաստակավոր գործիչ: Նրա գրքերը թարգմանվել են թե՛ նախկին ԽՍՀՄ ժողովուրդների և թե՛ եվրոպական բազմաթիվ լեզուներով:

Անվիճելի է, որ Աղբբեջանում գեղարվեստական գրականությունը ևս քաղաքականացված է, և ազատ ստեղծագործող մտքին փոխարինել են պետական պատվերներով իրականացվող գեղծարարությունները, ազգայնամոլական թեմաները, ազգամիջյան թշնամանքի հրահրումը և քարոզը: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ նման պայմաններում այդ կաղապարները խախտող ցանկացած գրող պետք է դառնար իշխանությունների և հասարակության գերակշռող մասի թիրախը: Այդպես եղավ Ա. Այլիսլիի պարագայում, երբ վեպի հրատարակումից հետո նրա նկատմամբ Աղբբեջանում սկսվեց լայնածավալ հալածանքի արշավ. նրա հասցեին տեղացին

¹ Տե՛ս նաև վեպի հայերեն թարգմանությունը. **Այլիսլի Ա.**, Քարակերտ երազներ, վեպ-ռեքվիեմ, ռուսերենից թարգմանությունը Հակոբ Սողոմոնյանի և Լևոն Գալստյանի, Երևան, 2013:

բացահայտ սպառնալիքներ, միմյանց հաջորդեցին ազգայնական բողոքի ելույթներ, նրա գրքերի հրապարակային հրկիզումներ, կոչումներից զրկում և այլն:

«Քարե երազները», որը հեղինակը համարում է վեպ-ռեքվիեմ, վաղուց արդեն ապացուցման կարիք չունեցող պատմական ճշմարտության արտացոլումն է: Այն բավականին հետաքրքիր կառուցվածք ունի. գրողը պատմում է նաև 20-րդ դարի սկզբին Ագուլիսում տեղի ունեցած հայկական կոտորածների մասին և զուգահեռներ անցկացնում դրանց և 1980-ականների վերջին Սումգայիթի, Բաքվի հայերի ջարդերի, հակահայկական գործողությունների միջև: Հեղինակը հնարավորություն է ընձեռում ադրբեջանցու շուրթերից լսելու և ընկալելու այդ ժամանակաշրջանում երկրում տիրող ներքին բարոյահոգեբանական իրավիճակի առանձնահատկությունները, հայերի հանդեպ արմատացող ազգայնամոլական թշնամանքը:

Վեպի հերոսները հիմնականում արվեստի ոլորտի գործիչներ են, մտավորականներ, որոնց գործունեությունը և մտորումները ներկայացվում են ադրբեջանցի ազգայնամոլների գործողությունների, պետական պաշտոնյաների պահվածքի, հայերի գույքի թալանի հաշվին նոր հարստացող պետական վերնախավի ձևավորման համատեքստում: Կարելի է ասել, որ վեպում առանցքային տեղ է հատկացված պատմական Ագուլիսին¹. գրողը շարունակ փաստեր է բերում Ագուլիսում հայկական ներկայության, մշակույթի, եկեղեցիների մասին, բայց դրանից գատ` նաև կարծես գործող կերպարի հատկանիշներով է օժտում նախկինում հայաբնակ այդ տարածքը:

Վեպի գլխավոր հերոսն Ադրբեջանում բավական մեծ հարգանք վայելող դերասան Մադայ Մադիխլին է: Մահացու ծեծի ենթարկվելուց հետո նա հայտնվում է հիվանդանոցում միայն այն պատճառով, որ փորձել է սատարել մի խեղճ ու անպաշտպան հայի: Վեպում նկարագրվող իրադարձությունների զգալի մասի ընթացքում գլխավոր հերոսը գտնվում է անգիտակից վիճակում և տեսնում ներկայի ու անցյալի պատկերներ, «ճամփորդում» ժամանակների միջև: Բազմաթիվ գրողների օգտագործած այս մեթոդն Ա. Այլիսլիի մոտ բավական հաջող է ստացվել և թույլ տվել նրան մերձեցնելու իրականն ու երևակայականն անջրպետող սահմանները, պատկերել գլխավոր հերոսի` խորհրդանշաններով լի յուրահատուկ ներաշխարհը: Գրողն այսպես է սկսում հերոսի կյանքի ուշագնացության ժամանակաշրջանի նկարագրությունը. «Արտիստը հենց իր այդ սեփական աշխարհում էր հայտնվել այն պահից, երբ կորցրել էր գիտակցությունը» (էջ 30): Վեպն ինչ-որ չափով կառուցված է նաև Մադիխլիի հոգեբանական խնդիրների վերհանման, նրա ապրած ճգնաժամի վերլուծության հիման վրա: Գլխավոր հերոսի հոգեբանական վիճակը պատկերող հետաքրքրական դրվագներից է այն, որ նա

¹ Գրողը ծնունդով Ագուլիսից է, որն ադրբեջանցիներն աղավաղված անվանվում են Այլիս. դրանով է պայմանավորված նրա Այլիսլի ազգանունը, այն է` այլիսցի (ագուլիսցի):

օրեր շարունակ գնում է կայարան, որպեսզի դիմավորի և ճանապարհի երևան-Բաքու գնացքը, որը որոշակի խորհրդանիշ է:

Ուշագրավ են նաև մտավորականի մտորումներն իր ժողովրդի գործած մեղքերի և դրանց համար ապաշխարելու վերաբերյալ: Ընդ որում, այդ ամենն ավելի տպավորիչ դարձնելու նպատակով գրողն ընտրել է չափազանցության, գրոտեսկային մեթոդը: Այսպես, սոււմգայիթյան ջարդերից հետո Սադիխլին լրջորեն խորհրդածել է Էջմիածին գնալու, քրիստոնեություն ընդունելու և իր ժողովրդի գործած մեղքերի համար Ամենայն Հայոց Կաթողիկոսից թողություն հայցելու մասին: Նկարագրության գրոտեսկային մեթոդին հետամուտ գրողը փաստում է, որ, չբավարարվելով այսքանով, գլխավոր հերոսը ցանկություն է հայտնել նաև դառնալու հոգևորական-ճգնավոր և աղոթքներով Աստծուց ներում հայցելու՝ հայերի նկատմամբ մուսուլմանների իրականացրած վայրագությունների համար: Կրկին միահյուսելով իրականի ու երևակայականի սահմանները՝ գրողը պատկերում է հերոսի հոգեվիճակը՝ նշելով մասնավորապես, որ նա չի կարողանում ըմբռնել, թե երբ է իր մոտ առաջացել Էջմիածին գնալու ցանկությունը՝ քնած ժամանակ, թե՞ իրականում: Դա է հավաստում նաև այն, որ հիվանդանոցում գտնվելով անգիտակից վիճակում՝ նա երբեմն արտաբերել է հնչյուններ, որոնք հիշեցնում էին Էջմիածին անվան աղավաղված տարբերակները:

Վեպում հանդիպում ենք նաև այն մտքին, որ պատմական ճշմարտությունների մասին բարձրաձայնումը, համամարդկային չարիքների դատապարտումը բխում են ոչ թե հայերի, այլ հենց իրենց՝ աղբբեջանցիների շահերից: Այդ հենքի վրա է մեկնաբանվում գլխավոր հերոսի մերժողական պահվածքը հակահայկական հիստերիայի առնչությամբ: Սակայն հարկ է նկատել, որ այստեղ քողարկված է սույն վեպը գրելու շարժառիթը. ի դեմս գլխավոր հերոսի դերում հանդես եկող մտավորականի՝ Ա. Այլիսլին հավանաբար մարմնավորել է իրեն:

Վեպի խորհրդանշական կերպարներից է նաև Սադիխլիի աները՝ հոգեբույժ Աբասալիևը, որը ծագումով Ագուլիսից է: Հենց նրա միջոցով է հեղինակը վառ կերպով ներկայացնում, թե ինչպիսին է եղել հին Ագուլիսը, ինչպիսին է այն այսօր, ինչ տեղ ու դեր են այնտեղ ունեցել հայերը, և ինչ է փոխվել նրանց կոտորածից և տեղահանումներից հետո: Նկարագրելով 20-րդ դարի սկզբում Ագուլիսի հայերի ջարդին առնչվող դեպքեր՝ հեղինակը թանձրացնում է գեղարվեստական շեշտադրումները և Աբասալիևի շուրթերով պատմում, որ կոտորված հայերի տներում բնակվում են հոգիներ, որոնք հանգիստ չեն տալիս դրանք զավթածներին և նրանց սերունդներին: Ավելին՝ այդ ամենին հաղորդելով փոքր-ինչ առասպելական երանգ՝ գրողը վեպը դարձնում է մի կողմից ավելի գեղարվեստական և գրավիչ, մյուս կողմից ավելի է միահյուսում իրականի ու երևակայականի սահմանները: Աբասալիևը մասնավորապես նշում է, որ «հայկական տներ զավթած յուրաքնայուր

այլիսյան ընտանիքում կան հոգեկան հիվանդներ» (էջ 36), և թվարկում կոտորված հայերի տներում բնակվող այն աղբբեջանցիների ընտանիքները, որոնցում իսպառ բացակայում է հոգեկան անդորրը: Վեպի հերոսները դա համարում են Աստծո պատիժ՝ ի պատասխան դարասկզբի ոճրագործությունների: Դրանով գրողն ակնարկում է, որ եթե դրանց հետևանքներն իրենց զգալ են տալիս նաև շուրջ 100 տարի անց, ապա 1980-ական թվականների վերջի ոճիրները ևս չեն կարող անպատիժ մնալ. աղբբեջանական ընտանիքներում լինելու են նոր հոգեկան խեղումներ, և ծագելու են տարատեսակ խնդիրներ:

Աբասալինն ընդարձակ մեջբերումներ է անում «Ձաքարիա Ագուլեցու օրագրությունից», որտեղ բազում փաստեր կան հայոց պատմության, հայերի նկատմամբ իրականացված կոտորածների մասին, և իր ընթերցումներն ամփոփում է հետևյալ կերպ. «Սրանք գալիս են և սպանում, նրանք գալիս են և սպանում: Եթե բռնությամբ սպանված յուրաքանչյուր հայի համար գեթ մեկ մոմ վառեին, ապա այդ մոմերի ցուլքը լուսնի լույսից ավելի վառ կլիներ» (էջ 65):

Վեպի հիշարժան հերոսներից է նաև Սադիխլիի ընկերը՝ դերասան Նուվարիշ Քարաբախլին, որը նույնպես դասվում է Աղբբեջանում հակահայկական հիստերիան սարսափով ընդունած արվեստագետների շարքը: Ավելի համառոտ նկարագրելով Քարաբախլիի հոգեկան ապրումները՝ գրողն այնուհետև որոշ ժամանակ չի անդրադառնում նրան, իսկ ավելի ուշ այլ հերոսների երկխոսությունից պարզվում է, որ նա ինքնասպան է եղել: Նման մոտեցումն ընթերցողին հնարավորություն է ընձեռում մտորելու և եզրակացությունների հանգելու, սակայն գերիշխում է այն մտայնությունը, որ արվեստագետին ինքնասպանության է դրդել երկրում տիրող բարոյահոգեբանական անհանդուրժելի մթնոլորտը:

Նկարագրություններից և ներքին մենախոսություններից, «մտքերի հոսքից» գատ՝ Ա. Այլիսլին վեպում զգալի տեղ է հատկացնում նաև հերոսների երկխոսությանը և այդ միջոցով վարպետորեն ուրվագծում Աղբբեջանում ձևավորված և արմատավորված հակահայկական մթնոլորտը: Այսպես, հերոսներից մեկը խոստովանում է. «Փորձիր որևէ մեկին հայ անվանել, և վերջ: Անմիջապես կոտնահարեն, կտրորեն՝ ինչպես վայրի գազանները: Կմասնատեն, և ոչ ոք չի համարձակվի անգամ մոտենալ» (էջ 14):

Ուշագրավ է նաև Սադիխլիի և նրա կնոջ՝ Ազադայի զրույցը, որի ընթացքում սումգայիթյան ողբերգության առնչությամբ վերջինս ամուսնուն ասում է. «Դա կազմակերպվել էր ՊԱԿ-ի կամ, հավանաբար, իշխանության՝ այժմ տարբեր հանցախմբերի մասնատված մնացորդների կողմից: Ես երբեք չեմ հավատա, Սադայ, որ առանց իրական կազմակերպչի աղբբեջանցիները կարող էին դիմել նման խելացնոր վայրագության» (էջ 47):

Մեկ այլ հերոս՝ Մոսկվայից Բաքու տեղափոխված բժիշկ Ֆարիդ Ֆարգանին, մահամերձ Սադիխլիին վիրահատելուց դեռևս 10-15 օր առաջ վիրահատել էր 14-15 տարեկան մի հայ աղջնակի, որը հրաշքով էր փրկվել մահվան ճիրաններից: Մարդաշատ մետրոյում մի քանի աղբբեջանցի կանայք հարձակվել էին նրա վրա և ականատեսների աչքի առջև դաժանաբար ծեծի ենթարկել: Ի դեպ, համանման, սակայն ավելի վայրագ դեպքի ականատեսն է դարձել նաև Սադիխլին, որի ներկայությամբ մի հայ աղջկա վրա կայարանում բենզին են լցրել և հրկիզել: Այս դեպքից հետո նա հոգեբանական խորն ընկճախտ է ապրել:

Ֆարգանին Բաքվում շատ տարօրինակ երևույթների ականատեսն է դառնում, որոնցով և պայմանավորված էր կրոնական ենթատեքստ ունեցող՝ հայերի նկատմամբ առկա թշնամական վերաբերմունքը: Անտարակույս հետաքրքիր են հերոսի մտքերը. «Բժիշկը հատկապես ապշած էր հայերի հանդեպ քաղաքի մուսուլման բնակչության դրսևորած դաժանությունից, հնարավոր է նաև այն պատճառով, որ նման դաժանություն հայերի կողմից նա անձամբ երբեք չէր տեսել» (էջ 25):

Վեպի մեկ այլ փաստական կողմն առնչվում է այդ տարիներին հայերի գույքի կողոպուտին և դրա յուրացմամբ հարստացողներին. ընդ որում՝ նման անձինք կային աղբբեջանական հասարակության տարբեր խավերում՝ թե՛ շարքային քաղաքացիների և թե՛ պաշտոնյաների թվում: Օրինակ՝ Ա. Այլիսլին գրում է մի պետական պաշտոնյայի մասին, որը տիրացել է թատրոնի հայ աշխատակցուհու տանը՝ նրան պարզապես ցած նետելով բարձրահարկ շենքի լուսամուտից և դա ներկայացրել որպես ինքնասպանություն: Այս դրվագի նկարագրությանը հետևում է վեպի հերոսի դատողությունը, որը լավագույնս պատկերացում է տալիս այդ ժամանակշրջանում Աղբբեջանում տիրող մթնոլորտի մասին. «Այսօր արդեն ժամանակներն են այդպիսին: Ամեն օր թեկուզ հարյուր հայի ցած նետի պատշգամբից» (էջ 19):

Նկարագրվող իրադարձություններն ավարտվում են 1990 թ. հունվարին, երբ գիտակցության չգալով՝ հիվանդանոցում վախճանվում է վեպի գլխավոր հերոս Սադայ Սադիխլին: Հեղինակը վեպն ավարտում է մի խորիմաստ նախադասությամբ, որը գալիք պատերազմների, բռնությունների մասին ակնարկ-կանխագուշակում է. «Եվ աղավնիները, որոնք գիշերում էին Ագուլիսի եկեղեցիներում, դեռևս հանգիստ քնել էին և տեսնում էին խաղաղ երազներ» (էջ 68): Այստեղ ևս նկատելի է վեպի վերնագրին առնչվող բառախաղ-խորհրդանիշ՝ քարե երազներ-խաղաղ երազներ:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ «Քարե երազները», փաստորեն, փաստագեղարվեստական վեպ է, որի հեղինակը չի խուսափում հաճախակի և անվարան դիմելու խորհրդանշանների կիրառման եղանակին: Նկատենք նաև, որ գրքում տեսանելի են ներկայումս գերիշխող գրական ուղղությանը՝ պոստմոդեռնիզմին, հատուկ երանգներ: Հեղինակը երբեմն մեծ տեղ է

հատկացնում ուղղակի կամ երկխոսությունների միջոցով նկարագրություններին, ժամանակային անտեղի անցումներին, որոնք որոշ հատվածներում թուլացնում են դիպաշարի ռիթմը: Նրա անուրանալի արժանիքներից է ադրբեջանական հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացների բացահայտումը. մասնավորապես մի կողմից ազգայնամոլական տրամադրություններ կրող և դրանց նկատմամբ դրականորեն տրամադրված մեծամասնության դիմագծի ուրվագծումը, մյուս կողմից՝ մտավորականների աննշան խմբի դիրքորոշման պարզաբանումը, որը հազվադեպ (ինչպես գլխավոր հերոսի պարագայում է) իր բողոքի ձայնն է բարձրացնում մարդասպանությունների, ռասիզմի և ազգայնամոլության դեմ:

Վեպի փաստական հենքը թույլ է տալիս հավաստել, որ նկարագրվող դեպքերի գերակշռող մասի անմիջական ականատեսը դարձած հեղինակն այդ իրադարձություններից շուրջ երկու տասնամյակ անց դրանք ընթերցողին է ներկայացնում գեղարվեստական վարպետությամբ: Սա ադրբեջանցի մտավորականի սխրանքն է, որը, երկար ժամանակ լինելով կաշկանդված, այլևս ի գորու չէ հանդուրժելու կեղծիքը: Ա. Այլիալիի դիրքորոշումը ցույց է տալիս, որ ադրբեջանական հակահայկական քաղաքականությունը գոնե սակավաթիվ մտավորականների կողմից Ադրբեջանում, բարեբախտաբար, «հավուր պատշաճի» չի ընկալվում: Իհարկե հեղինակը թույլ է տվել որոշ պատմական անճշտություններ, բայց նրա ստեղծագործությունն անտարակույս ունի ոչ միայն գեղարվեստական, այլև հասարակական-քաղաքական մեծ նշանակություն, և այն հարկ է անվարան համարել լռության ու կեղծիքի պատնեշը սասանելուն ուղղված առաջին քայլերից մեկը:

Սույն գրախոսությունը ցանկանում ենք ավարտել՝ մեջբերելով «Դրուժբա նարոդով» ամսագրի խմբագրականի եզրակացությունը. «Ի՞նչ անի գրողը, որը չի կարողանում ո՛չ լռել, ո՛չ ձայնն իջեցնել: Անի այն, ինչ անում է ատելությանը դեմ հանդիման ելած Աքրամ Այլիսլին»: Այս հռետորական հարցն ու դրան հաջորդող կոչը խիստ արդիական են հնչում Ադրբեջանում տիրող ամբողջատիրական բռնապետության պարագայում:

*ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ԴԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*